

## Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

### Հայոց պատմություն առարկայից օլիմպիադայի անցկացման

#### Նպատակները.

- նպաստել Հայոց պատմություն առարկայի հանդեպ երիտասարդության հետաքրքրության բարձրացմանը,
- հայտնաբերել տաղանդավոր երիտասարդների,
- աջակցել նախապատրաստվելու ընդունելության քննություններին:

#### Կազմակերպիչը.

Օլիմպիադայի նախաձեռնողն ու կազմակերպիչը հանդիսանում է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետը:

#### Հենակետային հաստատությունը.

Միջոցառումը իրականացվելու է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետում:

#### Օլիմպիադայի ոլորտը.

- Հայոց պատմություն

#### Մասնակիցները.

Օլիմպիադայի մասնակիցներ կարող են դառնալ 11-12-րդ դասարանների այն աշակերտները, որոնց կներկայացնի տվյալ դպրոցը:

Մրցույթները կազմակերպվելու են երկու խմբերի դասարանների աշակերտների համար.

- 11-րդ դասարան՝ 1-ին խումբ
- 12-րդ դասարան՝ 2-րդ խումբ

#### Մասնակցության գրանցման պայմանները.

Օլիմպիադային մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը և այն ուղարկել [history\\_olimpiada@yahoo.com](mailto:history_olimpiada@yahoo.com) էլեկտրոնային հասցեին:

#### Օլիմպիադայի կազմակերպման և անցկացման կարգը.

Օլիմպիադան անցկացվում է մեկ մրցութային փուլով: Այն կազմակերպվելու և անցկացնելու պատասխանատվությունը կրում է օլիմպիադայի կազմակերպիչը:

Օլիմպիադան կազմակերպվելու է ՀՊՄՀ-ում ս.թ. նոյեմբերի 28-ին (Երևանի դպրոցներ) և 29-ին (մարզերի դպրոցներ), ժամը 14:00-ին:

Մրցույթին նախատեսվում է «Հայոց պատմություն» առարկայի ավարտական և ընդունելության քննության ձևաչափով պատրաստված թեստային առաջադրանք: 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտները բաժանվելու են առանձին խմբերի:

### **Արդյունքների ամփոփում և պարզևատրում.**

Օլիմպիադայի մրցութային փուլում ամենաբարձր միավորներ հավաքած մասնակիցները կպարզևատրվեն դիպլոմներով, նվերներով, կստանան զեղչի իրավունք ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետ ընդունվելու դեպքում՝ առաջին մրցանակային տեղի համար 50, երկրորդի՝ 40, երրորդի՝ 30, 4-10-րդ տեղերը զբաղեցնողները՝ 10 տոկոս: Ձեռչը գործելու է ուսումնառության առաջին տարվա համար:

### **Օլիմպիադայի ժամանակացույցը.**

Մասնակցության հայտերի ներկայացում՝	մինչև հոկտեմբերի	21
Մրցութի անցկացման օրեր՝		
Երևանի դպրոցներ	նոյեմբերի	28
Մարզերի դպրոցներ	նոյեմբերի	29
Մրցութի արդյունքների հրապարակում՝	դեկտեմբերի	6
Մրցանակների հանձնման արարողություն՝	դեկտեմբերի	13

Օլիմպիադայի հետ կապված մանրամասներ և լրացուցիչ տեղեկություններ կտեղադրվեն [www.aspu.am](http://www.aspu.am) կայքում:

Լրացուցիչ հարցերի և պարզաբանումների համար կարելի է դիմել ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետ՝ [history\\_olimpiada@yahoo.com](mailto:history_olimpiada@yahoo.com) էլեկտրոնային հասցեով կամ 010 59-70-91, 077-77-47-53 հեռախոսահամարներով: